



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ - <<ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ>>**

ԱՌԱՐԿԱ- ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ – ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ -<<ՎԱՀԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ՍԵՎԱՆ - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒ
ԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 2 ա/ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ ԿԱԶՄՈՂ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2.2 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

2.3 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

2.4 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՆՈՒՆԴԸ

2.5 ՍԹՐԵՍԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 2բ/ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքը բավականին արդիական է, քանի որ վերջին տարիներին կատարած փոփոխությունները լուրջ ազդեցություն թողեցին ողջ կրթականկրթության ոլորտում սահմանման չափորոշիչների մշակման գործընթացում: Այսօր դպրոցական համակարգը դեռևս գտնվում է զարգացման փուլում, որի պատճառով դեռ եվս առկա են բազմաթիվ խնդիրներ:

Կրթության բարեփոխումներն անդրադարձան նաև արժեքային համակարգի մշակման գործընթացի վրա:

Արժեքային համակարգերին տիրապետելու աստիճանից է կախված աշակերտների հետագա գործունեության հաջողությունը:

Աշխատանքի օբյեկտը: Արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկություններն են:

Աշխատանքի նպատակը: Օգնել աշակերտներին հստակեցնել և վերաբժն որել սեփական դիրքորոշումները կյանքի արժեքների վերաբերյալ:

Աշխատանքի խնդիրները:

1. Բացահայտել արժեքային համակարգի նպատակը, խնդիրները և առանձնահատկությունները:

2. Ուսումնասիրել դժվարությունները:

3. Ուսումնասիրել և վերլուծաբար ներկայացնել արժեքները, դրանց գործածումը:

Աշխատանքի տեսական նշանակությունը. ՀՀ հանրակրթական դպրոցներում արժեքների վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ներկա իրավիճակը, ինչպես նաև կանխորոշել հետագա պլաններն ու իրականացնել գործընթացները: Վերլուծել այս թեմայով գրականությունը: Բացահայտել արժեքների էությունը:

Հետազոտության նորույթը և գործնական նշանակությունը:

Շարադրանքում բացահայտված է

1.Արժեհամակարգի ձևավորումը կենսաբանության դասավանդման ընթացքում:

2.Հանրակրթական դպրոցի սովորողների միջավայրում ազգային արժե համակարգի ձևավորման խնդրին:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են ինչպես տրամաբանական, քննադական, վերլուծական, այն պես էլ համակարգակառուցվածքային վերլուծություն:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը. Հետազոտական աշխատանքը Բաղկացած է ներածությունից, երկու տրամաբանորեն փոխկապակցված Գլուխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և աղյուսակից:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԴԱՍԵՐԻՆ

Արժեքները, դրանք առարկաներ, երևույթներ, գաղափարներ, սկզբունքներ են ,որոնք մարդկանց համար մեծ կարևորություն ունեն :Յուրաքանչյուր մարդ ունի իր արժեքների համակարգը: Արժեհամակարգը մարդու բարոյական, նյութական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ զարգացման համար:

Մարդու արժեքների համակարգի վրա ազդում են կրթությունը, կենսափորձը, տարիքը, սոցիալական միջավայրը և այլն:

Ժամանակի ընթացքում որոշ արժեքներ կարող են փոփոխվել:

Ավագ դպրոցն ավարտողը պետք է .

- Կարևորի բնական գիտությունների դերը և նշանակությունը քաղաքակրթության զարգացման և անհատի ձևավորման գործում, Ընթռնի բնության հետ ներդաշնակ ապրելու անհրաժեշտությունը: Գիտակցի կենսաբանության դերն անհատի աշխարհայացքի ձևավորման գործում:
- Գիտակցի կենսաբանական գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունը առօրյա կյանքում և աշխատանքում:
- Գիտակցի կենսաբանական գիտելիքների կարևորությունն առողջ ապրելակերպի կազմակերպման և վարակի հետ կապված հիվանդությունների կանխարգելման գործում:
- Կարևորի մտավոր աշխատանքը, ձգտի ստեղծագործական աշխատանքի, կարողանա նպատակներ և խնդիրներ դնել և դրանք իրականացնելու համար նպատակասլաց գործունեություն ծավալել:

- Գնահատի մարդկային գործնեության ազդեցությունը բնության վրա, կարևորի շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը և մասնակցի դրան նպատակաուղղված միջոցառումների իրականացմանը:
- Ունենա դրական վերաբերմունք կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ:
- Գիտակցի կենսաբանական հետազոտությունների ժամանակ բարոյահոգեբանական նորմերի պահպանման անհրաժեշտություն:

1.2 ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Այժմ անդրադառնամ հանրակրթական դպրոցի սովորողների միջավայրում ազգային արժեհամակարգի ձևավորման խնդրին: Բոլոր ժամանակներում նվիրական և մեծագույն արժեք է հայրենիքն ու հայրենասիրությունը:

Դրա առանցքն կազմող հիմնարար արժեքներից հատկապես կարևորել են ազգը, որպես հավաքական ամբողջություն հայրենիքը: Որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք:

Ոմանք գնահատում են նյութական, մյուսները հոգևոր արժեքները: Ի վերջո արժեքային համակարգ ունեն ոչ միայն անհատ մարդիկ, այլև ժողովուրդներն ու պետությունները:

Արժեքը փիլիսոփայական հասարակագիտական հասկացություն է, ինչով բնութագրվում է իրականության, առարկաների և երևույթների հասարակական, մշակութային նշանակությունը: Արժեքի շնորհիվ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ: Այն իմաստավորվում է հասարակական մշակութային համատեքստում և դառնում զանազան գնահատականների

առարկա որպես սոցիալական արժեք; բարիք, օգտակարություն, հարստություն և այլն:

Անդրադառնալով ազգային արժեհամակարգի խնդրին նկատենք, որ այն արժեքները որոնք կազմում են տվյալ ազգի արժեհամակարգի առանցքը, կոչվում են հիմնարար արժեքներ: <<Ազգային արժեհամակարգը ազգային գաղափարախոսության ավիշն է, բովանդակությունն ու շարժիչ ուժը>>,-նշում է Ն. Բեժանյանն իր <<Հայկական փորձառություն >>հոդվածում:

Գլուխ 2 ա. Առողջությունը մարդկային արժեքների համակարգում

2.1 Առողջության բաղադրիչ կազմող մակարդակները և գործոնները

Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության կողմից սահմանված համամարդկային արժեքների ցանկում գերակայությունը տրվում է առողջությանը: ԱՀԿ-ի կանոնադրությունում առողջությունը բնութագրվում է որպես լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ, այլ ոչ թե պարզապես հիվանդությունների կամ ֆիզիկական թերությունների բացակայություն:

Մարդու առողջությունն արտահայտում է երկրի կենսամակարդակը, սանիտարական վիճակը և անմիջականորեն ազդում աշխատանքի արտադրողականության, հասարակության բարոյական մթնոլորտի և մարդկանց տրամադրության վրա:

Առողջության մակարդակները

Կատարյալ առողջ վիճակ է, երբ բոլոր օրգան համակարգերը իդեալական են գործում:

Գործնական առողջ է օրգանիզմը, որի բոլոր ցուցանիշները պահպանվում են ֆիզիոլոգիական նորմերի սահմաններում:

Հարմարվողականության խախտում ենք կոչում անբարենպաստ գործոնների երկարատև ազդեցության պատճառով օրգանիզմում

Ինքնակարգավորման համակարգի խախտումը, որի դեպքում օրգանիզմում կուտակվում են թունավոր նյութեր, թուլանում է իմունային արձագանքի ակտիվությունը:

Առողջության գործոնները

Առողջության մակարդակը կախված է մի քանի գործոններից: Դրանցից մի քանիսը գտնվում են անհատի վերահսկողությունից դուրս, օրինակ՝ ժառանգականությունը կամ շրջակա միջավայրի վիճակը:

Ուսումնասիրելով ազգաբնակչության առողջական վիճակը առողջապահության համաշխարհային կազմակերպությունը առանձնացրել է, այսպես կոչված, ռիսկային՝ տարբեր հիվանդությունների զարգացմանը նպաստող գործոններ: Դրանցից մեծ ազդեցություն ունեն ժամանակակից կյանքի բարձր տեմպը, նյարդային լարվածությունն ու սթրեսներ ավելցուկային, ոչ ռացիոնալ սնունդն ու դրա հետ կապված գիրացումը, ջրային և օդային աղտոտվածությունը, հարբեցողությունը, ծխելը, թմրամոլությունը, նոր հիվանդություններ առաջացնող գործոնների ի հայտ գալը:

2.2 Առողջությունը և առողջ ապրելակերպ

Առողջ ապրելակերպի հիմքում ընկած են հետևյալ դրույթները՝

Առողջ ապրելակերպի ակտիվ կրողը, որպես կենսագործունեության

և սոցիալական դիրքի օբյեկտ և սուբյեկտ, կոնկրետ մարդն է.

Առողջ ապրելակերպի իրականացման մեջ մարդը հանդես է գալիս կենսաբանական և սոցիալական սկզբերի ամբողջությամբ:

Առողջ ապրելակերպի ձևավորման հիմքում մարդու անհատական Դրդապատճառի դիրքորոշումն է, ուղղված սեփական, սոցիալական, ֆիզիկական, մտավոր, հոգեկան հնարավորությունների և ընդունակությունների իրացմանը:

2.3 Առողջությունը և շարժական ակտիվությունը

Հայտնի Ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերը գրել է.<<Շարժումը կյանք է>>: Շարժողական ակտիվության պահանջումները մեծապես կախված է ժառանգական, գենետիկ հատկանիշներից: Յուրաքանչյուր մարդու համար գոյություն ունի շարժողական ակտիվության օպտիմալ ծավալ: Նվազագույն մակարդակը թույլ է տալիս պահպանել օրգանիզմի նորմալ գործառական վիճակը: Եթե շարժողական ակտիվությունը այս մակարդակից ցածր է, առաջանում է շարժողական անբավարարության բացասական երևույթ. մինչև անգամ հիվանդություն: Առավելագույն մակարդակն այն սահմանն է, որից առավել օրգանիզմը գերձանբաբեռնում է:

Առողջությունը և սնունդը

Սնունդը համարվում է առողջության և զարգացման ամենակարևոր բաղադրիչը: Ոչ ճիշտ սնունդը իր բոլոր դրսևորումներով երեխաների ու մայրերի հիվանդության ու մահվան պատճառներից մեկն է: Սննդի անբավարարությունը, ներառյալ վիտամինների և հանքային նյութերի

պակասը դառնում է երեխաների հիվանդության պատճառ, խանգարում առողջ զարգացմանը և անդրադառնում ողջ հետագա կյանքի արդյունավետության վրա:

Մանկամթերքի ապահովությունը հասարակական առողջապահության գերակայունություններից մեկն է ;

Մանկի գլխավոր նշանակությունը օրգանիզմին անհրաժեշտ սննդային նյութերով և էներգիայով ապահովելն է:

Մանկային նյութերը բաժանվում են 2 խմբի: 1-ին խումբն իր մեջ ներառում է հիմնական սնուցող նյութերը. Սպիտակուցներ, ճարպեր և ածխաջրեր, որոնք մարդուն անհրաժեշտ են որոշակի չափով: Մյուս խումբը ներառում է վիտամինների և հանքային աղերի միացությունները, որոնք անհրաժեշտ են շատ քիչ չափաքանակով: Դրանք էներգիայի աղբյուր են, բայց և մասնակցում են դրա յուրացմանը, ինչպես նաև գործառույթների կարգավորմանը և օրգանիզմի զարգացման ու աճի իրականացմանը:

Սթրեսը և առողջությունը

Սթրեսների պատճառները կարող են տարբեր լինել, կենսաբանական համակարգերի լարվածություն, հիվանդություններ, թունավորումներ, տարբեր ֆիզիոլոգիական և հորմոնալ փոփոխություններ, ինչպես նաև հուզական ոլորտի վրա ցանկացած ներգործություն:

Չափավոր սթրեսն օգնում է օրգանիզմին հստակ և համակարգված աշխատել, օրինակ՝ այն օգնում է դպրոցականին հավաքվել ստուգողական աշխատանքից կամ քննությունից առաջ: Նման սթրեսը մոբիլիզացնում է ողջ ուժերն ու թույլ չի տալիս հոգեկան հավասարակշռությունից հանել օրգանիզմը:

Կարճատև կամ սուր սթրեսին բնորոշ են արագությունն ու անսպասելիությունը: Սուր սթրեսի ծայրահեղ աստիճանը շոկն է:

Քրոնիկ սթրեսն պարտադիր չէ, որ լինի շոկի հետևանք: Այն ի հայտ է գալիս մշտական կամ երկարատև զգալի ծանրաբեռնվածությունից:

Գլուխ 2ր Հանդուրժողականությունը մարդկային արժեքների համակարգում

Սովորողների մեջ հանդուրժողականության ձևավորմանը նպաստող գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի չափորոշիչները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

Արժեքային համակարգ

- Սովորողը պետք է հարգի մարդու իրավունքները և հիմնարար գատությունները
- Սովորողը պետք է ունենա ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, արժևորի և մասնակցություն ցուցաբերի արդարության հաղթանակի գործին
- Սովորողը պետք է լինի մարդասեր, հարգալից վերաբերմունք դրսևորի և մասնակցություն ցուցաբերի արդարության հաղթանակի գործին
- Սովորողը պետք է հետաքրքրություն և բարեհաճ վերաբերմունք ունենա այլ մշակույթների և դրանք կրողների հանդեպ
- Սովորողը պետք է նրբանկատ, զսպված և հարգալից վերաբերմունք դրսևորի իրենից տարբեր կարծիքների, գաղափարների և վարքագծերի հանդեպ, եթե դրանք չեն ոտնահարում ուրիշների իրավունքներ

- Սովորողը պետք է գիտակցի իրենից տարբեր մարդկանց հետ շփման, փոխհարաբերությունների հաստատելու կարևորությունը
- Սովորողը պետք է ունենա խնայող, հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:
- Սովորողը պետք է գիտակցի սեռերի հավասարության, հատուկ կարիքներով մարդկանց, ազգային փոքրամասնությունների խոցելի խմբերի հանդեպ անխտրական վերաբերմունքի կարևորությունը և նման վերաբերմունք դրսևորի:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Սոցիալական բարեկեցությանը նպաստող հմտություններ

<p>Հաղորդակցման արդյունավետ հմտություններ</p>	<p>Կոնֆլիկտների կարգավորման հմտություններ</p>
<p>Ակտիվ լսողություն</p>	<p>Կոնֆլիկտային տեսակետները տարբերելու կարողություն</p>
<p>Մեփական կարծիքն արտահայտելու կարողություն</p>	<p>Հանդուրժողանակության հիման վրա կոնֆլիկտները լուծելու կարողություն</p>
<p>Զգացմունքները բաց արտահայտելու կարողություն</p>	<p>Կոնֆլիկտները կառուցողական բանակցությունների ճանապարհով լուծելու կարողություն</p>
<p>Համապատասխան արձագանք քննադատությանը</p>	
<p>Ծառայության, օգնության խնդրանքով դիմելու կարողություն</p>	
<p>Ապրումակցելու հմտություններ</p>	<p>Ճնշման, սպառնալիքի, խտրականության պայմաններում վարվեցողության հմտություններ</p>
<p>Զգացմունքները, այլ մարդկանց խնդիրները և պահանջները հասկանալու ունակություն</p>	<p>Ինքնավստահ պահելաձևի հմտություն</p>

Այդ ըմբռնումն արտահայտելու կարողություն	Մեփական դիրքորոշումը պաշտպանելու կարողություն
Օգնություն և աջակցություն ցուցաբերելու հմտություն	Խտրականությանն նկատմամբ հակազդեցություն

Լ

Հոգեկան բարեկեցությանը նպաստող հմտություններ

Մտավոր հմտություններ	Հուզական հմտություններ
Ինքնագնահատական, ինքնագիտակցություն	Ինքնակառավարման հմտություններ
Դրական վերաբերմունք ինքն իր, այլոց և կյանքի հեռանկարների նկատմամբ	Զայրույթը կառավարելու հմտություն
Համապատասխան ինքնագնահատական, սեփական կարողությունները իրական գնահատելը	Տագնապը հաղթահարելու հմտություն. Անհաջողությունը հաղթահարելու հմտություն.
Մեփական իրավունքների և պահանջմունքների, արժեքների գիտակցում.	Բռնություն, վնասվածք, կորուստ ցավ հաղթահարելու հմտություն . Դրական մտածողություն.
Խնդիրների վերլուծություն	Հաջողության մոտիվացիա
Խննդիրների լուծման տարբեր ուղիներ գտնելու, ունակություն	Նպատակի իրականացման վրա կենտրոնանալու ունակություն

Օպտիմալ որոշում ընդունելու հմտու.	Նպատակաւացության զարգացում.

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դիտարկումների արդյունքների ամփոփմամբ կարելի է հստակեցնել մի քանի եզրակացություններ որոնք արտահայտում են ուսումնասիրության առանցքային դրույթներն ու հիմնական եզրակացությունները:

Արժեքային համակարգը առավել լայն հասկացություն է, այն ներառում է ճանաչողական, հաղորդակցական, հանրամշակույթային, տեղեկատվական, ստեղծագործական, ընդհանրացված կարողություններն ու հմտությունները, սոցիալական փորձն ու արժեքային կողմնորոշումները:

Վերջին ժամանակներում մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում ավելի մեծ տարածում և կիրառություն են գտել արժեք և արժեքային համակարգ հասկացություններ:

Ինչպես ամեն մի հասարակական երևույթ, այնպես էլ արժեհամակարգը մշտապես փոխվում է, զարգանում,

կատարելագործվում, հղկվում: Այդ գործընթացում որոշ արժեքներ անհետանում են և փոշիանում, որոշ արժեքներ նոր են ի հայտ գալիս, իսկ որոշ արժեքներ էլ դարերի ընթացքում հարատևելով բյուրեղանում են:

- Օգնել գիտակցել և վերարժևորել սեփական դիրքորոշումը կյանքի արժեքների վերաբերյալ՝ դիտարկելով առողջությունը որպես կարևոր արժեք: Մտորել առողջությունը պայմանավորող գործոնների շուրջ:
- Առողջությունը պատկանում է բարձրագույն արժեքների թվին: Այն ամենատարբեր կենսական ծրագրերի իրագործման պայման է, կյանքը դարձնում է հաճելի և ցանկալի: Միևնույն ժամանակ դրա բացակայությունը կարող է սահմանափակել մարդու հնարավորությունները՝ պատճառելով անհարմարություն և տառապանք: Առողջություն և առողջ ապրելակերպ հասկացությունների՝ որպես կարևոր արժեքի ձևավորումը, ինչպես յուրաքանչյուր արժեքային կողմնորոշում, երկար և դժվար գործընթաց է որն իրագործվում է սոցիալական միջավայրի և ընդհանուր սոցիալական պայմանների ազդեցությամբ:
- Օգնել տարբերակել սթրեսային իրավիճակները, և մարդու զգացմունքային ու վարքային արձագանքն այդ իրավիճակներում:
- Ճանաչել տարբեր իրավիճակներում առաջացող հույզերն ու ապրումները:
- Օգնել գիտակցելու սթրեսի հետևանքները, դրանք հաղթահարելու կարևորությունը, խոսել հաղթահարման տարբեր եղանակների շուրջ:
- Հստակեցնել պատկերացումները սթրեսի, դրա ազդեցության և հաղթահարման եղանակների մասին:

Ուսուցչի մասնագիտական հմտություններին ներկայացվող պահանջները, մի կողմից, մնում են անփոփոք, մյուս կողմից՝ ժամանակի ընթացքում փոխվում են՝ կախված այն սոցիալական պայմաններից որոնցում տեղի է ունենում վերապատրաստումը:

Այսպիսով արժեհամակարգի չափորոշիչները կրթական ծրագրերում ընդգրկելով, ուսումնադաստիարակչական բոլոր գործընթացներում կիրառելով, դաստիարակչության մեթոդներն ու ձևերը վերջիններից համապատասխանեցնելով և դաստիարակչական ապահով միջավայր ստղծելով միայն կարելի է դաստիարակչությունն իրագործելի դարձնել

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական պետական կրթակարգ, Երեվան, Սատարես Ն.Բեժանյան: <<Հայկական փորձառություն>> հոդված
2. Հայկական Սովետական հանրագիտարան
3. Վ.Սողոմոնյան, Հայկական ինքնուրույնություն ու եվրոպական արժեհամակարգը.
4. Լ.Ֆ.Ալեքսանյան .Հանդուրժողականության գաղափարների ծագումն ու զարգացումը.
5. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն.Մուրադյան Ա.<<Առողջապրելակերպ>> Ուսուցչի ձեռնարկ 8-9-րդ դասարանների.
6. Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Երիտասարդների զարգացման և առողջության պահպանման ՄԱԿ-ի միջգործակալական խումբ:
7. Байер К. Шейнберг Л.,Здоровый жизни 1997
8. Брехман И.И, Валеология –Наука о здоровее, 1990

9. Зверев И. Д. Организм и здоровья.